Նախագիծ

Երկրորդ ընթերցում

Պ-885-02.03.2021,30.04.2021-ԱՍ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2010 թվականի հոկտեմբերի 27-ի «Ժամանակավոր անաշխատունակության եւ մայրության նպաստների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 2-րդ մասից հանել «աշխատանքային օրվա համար չի վճարվում, դրան հաջորդող» բառերը, իսկ «օրվա» բառը փոխարինել «օրերի» բառով:

Հոդված 2. Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասում «երկրորդ» բառը փոխարինել «առաջին» բառով:

Հոդված 3. Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասում «երկրորդ» բառը փոխարինել «առաջին» բառով:

Հոդված 4. Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասում «երկրորդ» բառը փոխարինել «առաջին» բառով:

Հոդված 5. Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-4-րդ կետերում եւ 2-րդ մասում «երկրորդ» բառը փոխարինել «առաջին» բառով:

Հոդված 6. Օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասում «երկրորդ» բառը փոխարինել «առաջին» բառով:

Հոդված 7. Օրենքի 22-րդ հոդվածի՝

1) 6-րդ մասից հանել «մայրության» բառերը:

2) 10-րդ մասում «Մայրության նպաստը» բառերը փոխարինել «Նպաստը» բառով, իսկ «անցնելը» բառը՝ «անցնելու ամիսը» բառերով:

3) 12-րդ եւ 13-րդ մասերում «երկրորդ» բառը փոխարինել «առաջին» բառով:

Հոդված 8. Օրենքի 24-րդ հոդվածը լրացնել հետևյալ խմբագրությամբ 4.1-ին մասով.

«4.1 Հղիության և ծննդաբերության արձակուրդի ժամանակահատվածում գործատուի փոփոխության (բացառությամբ վերակազմակերպման), դեպքում վարձու աշխատողին մայրության նպաստը վճարում է լիազոր մարմինը՝ Կառավարության սահմանած կարգով:»

Հոդված 9. Օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ մասի 4-րդ կետից հանել «աշխատանքային օրվան հաջորդող» բառերը:

Հոդված 10. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը և տարածվում է այն դեպքերի վրա, երբ ժամանակավոր անաշխատունակության առաջին օրը սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրն է կամ դրանից հետո, բացառությամբ սույն օրենքի 8-րդ հոդվածի, որը տարածվում է այն դեպքերի վրա, երբ ժամանակավոր անաշխատունակության վերջին օրը սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրն է կամ դրանից հետո:

ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՍՈԴՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երկրորդ ընթերցում

Պ-885-02.03.2021,30.04.2021-ԱՍ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2010 թվականի հոկտեմբերի 27-ի «Ժամանակավոր անաշխատունակության եւ մայրության նպաստների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 2-րդ մասից հանել «աշխատանքային օրվա համար չի վճարվում, դրան հաջորդող» բառերը, իսկ «օրվա» բառը փոխարինել «օրերի» բառով:

Հոդված 2. Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասում «երկրորդ» բառը փոխարինել «առաջին» բառով:

Հոդված 3. Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասում «երկրորդ» բառը փոխարինել «առաջին» բառով:

Հոդված 4. Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասում «երկրորդ» բառը փոխարինել «առաջին» բառով:

Հոդված 5. Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-4-րդ կետերում եւ 2-րդ մասում «երկրորդ» բառը փոխարինել «առաջին» բառով:

Հոդված 6. Օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասում «երկրորդ» բառը փոխարինել «առաջին» բառով:

Հոդված 7. Օրենքի 22-րդ հոդվածի՝

1) 6-րդ մասից հանել «մայրության» բառերը:

2) 10-րդ մասում «Մայրության նպաստը» բառերը փոխարինել «Նպաստը» բառով, իսկ «անցնելը» բառը՝ «անցնելու ամիսը» բառերով:

3) 12-րդ եւ 13-րդ մասերում «երկրորդ» բառը փոխարինել «առաջին» բառով:

Հոդված 8. Օրենքի 24-րդ հոդվածը լրացնել հետևյալ խմբագրությամբ 4.1-ին մասով.

«4.1 Հղիության և ծննդաբերության արձակուրդի ժամանակահատվածում գործատուի փոփոխության (բացառությամբ վերակազմակերպման), դեպքում վարձու աշխատողին մայրության նպաստը վճարում է լիազոր մարմինը՝ Կառավարության սահմանած կարգով

Հոդված ~~8.~~ 9. Օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ մասի 4-րդ կետից հանել «աշխատանքային օրվան հաջորդող» բառերը:

Հոդված ~~9.~~ 10.Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը÷ և տարածվում է այն դեպքերի վրա, երբ ժամանակավոր անաշխատունակության առաջին օրը սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրն է կամ դրանից հետո, բացառությամբ սույն օրենքի 8-րդ հոդվածի, որը տարածվում է այն դեպքերի վրա, երբ ժամանակավոր անաշխատունակության վերջին օրը սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրն է կամ դրանից հետո

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

<<ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ>> ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> (*Պ-885-02.03.2021-ԱՍ-011/0*) ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկությանվերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություն ներն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ կառավարություն	<<ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ>> ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> (*Պ-885-02.03.2021-ԱՍ-011/0*) ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ	Նախագիծը լրացնել նոր հոդվածով հետևյալ բովանդակությամբ. Հոդված 8. Օրենքի 24-րդ հոդվածը լրացնել հետևյալ խմբագրությամբ 4.1-ին մասով. «4.1 Հղիության և ծննդաբերության արձակուրդի ժամանակահատվածում գործատուի փոփոխության (բացառությամբ վերակազմակերպման), դեպքում վարձու աշխատողին մայրության նպաստը վճարում է լիազոր մարմինը՝ Կառավարության սահմանած կարգով: <u>ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ:</u> **Առաջարկի** հիմքը իրավակիրառ պրակտիկան է: Անձը գործատուի հետ գտնվում է աշխատանքային հարաբերությունների մեջ հղիության և ծննդաբերության արձակուրդի 140 օրվանից առաջին 10 օրվա ընթացքում: Նրան մայրության նպաստը վճարվում է 10 օրվա համար: Դրանից հետո նա ընդունվում է աշխատանքի /օրինակ, մասնակցում է քաղծառայողի մրցույթի և	Ընդունվել է:	Ընդունվել է:

			հաղթում է/: Այս դեպքում հարկ է լուծել 2 խնդիր 1. Նոր գործատուն պետք է նրան տա հղիության և ծննդաբերության արձակուրդ՝ իր մոտ աշխատանքի ընդունվելու օրվանից մինչև թերթիկում նշված 140 օրվա վերջին օրն ընկած ժամանակահատվածի համար: Դա հնարավոր է նախորդ գործատուի տված ժամանակավոր անաշխատունակության թերթիկի պատճենի հիման վրա: 2. հղիության և ծննդաբերության արձակուրդի օրերի համար գործատուն նրան պետք է վճարի մայրության նպաստ: Վերը նշված թերթիկի պատճենի հիմքով գործատուն այլևս չի կարող մայրության նպաստ վճարել, քանի որ թերթիկի դարձերեսին չի կարող լրացնել նպաստի հաշվարկի համար անհրաժեշտ տվյալներ/ արդեն լրացրել է նախորդ գործատուն/: Ըստ այդմ, նախագծով առաջարկվում է՝ այդ դեպքում մայրության նպաստը կնշանակի ծառայությունը:		
2.	ՀՀ կառավարություն	<<ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ>> ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> (*Պ-885-02.03.2021-ԱՍ-011/0*) ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ	Նախագծի անցումային դրույթները լրացնել՝ սահմանելով այն դեպքերը երբ ժամանակավոր անաշխատունակության առաջին օրը սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրն է կամ դրանից հետո, բացառությամբ սույն օրենքի 8-րդ հոդվածի, որը տարածվում է այն դեպքերի վրա, երբ ժամանակավոր անաշխատունակության վերջին օրը սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրն է կամ դրանից հետո: ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ: Առաջարկի հիմքում օրենքի այն դրույթն է, որի համաձայն՝ Նպաստը նշանակվում է,	Ընդունվել է:	Ընդունվել է:

			եթե դրա համար պահանջվող փաստաթղթերը ներկայացվել են աշխատունակության վերականգնման, հղիության և ծննդաբերության արձակուրդի ավարտման կամ հաշմանդամության խումբ սահմանելու օրվան հաջորդող ամսվանից սկսած վեցամսյա ժամկետում /24-րդ հոդված 6-րդ մաս/: Ըստ այդմ, անցումային դրույթով ապահովվում է օրենքի փոփոխության կիրառումը այն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ ծագած հարաբերությունների վրա: Դրույթի առկայությամբ կապահովվի նույն փաստական հանգամանքներում գտնվող անձանց ժամանակավոր անաշխատունակության նպաստի իրավունքի իրացման խտրական մոտեցման բացառման սկզբունքի կիրառումը: Երկու մարդ անաշխատունակ են եղել, օրինակ, 05.05.2021-15.05.2021: Մի դեպքում թերթիկը ներկայացվել է 20.05.2021, մյուսում՝ 20.06.2021: Դրույթի բացակայության դեպքում իրավունքի իրացումը կփոխկապակցվի դիմում ներկայացնելու օրվա, որ թե անաշխատունակության ժամանակահատվածի հետ և թերթիկն ուշ ներկայացնողը կգտնվի ավելի բարենպաստ իրավական պայմաններում:		